

## Պաշտոնական ընդդիմախոսի

### Կարծիք

*Սերգեյ Երվանդի Պետրոսյանի «Երևանի չօգտագործվող կառույցների հարմարեցման խնդիրները» ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԸ. 00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ Ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար*

Սերգեյ Երվանդի Պետրոսյանը սույն ատենախոսության մեջ անդրադառնում է մի խնդրի, որին բախվում են ժամանակակից այն քաղաքները, որոնք ձևավորվել են պատմականորեն՝ կրելով ժամանակի տարբեր շերտեր իրենց կառուցվածքում և խնդիր ունեն մեր օրերում բավարարել բնակիչների կարիքները: Ունենալով այս խնդիրը շատ քաղաքներում՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ տարբեր երկրներում, մասնագետները արձագանքելով հանրության, տնտեսության պայմաններին, առաջարկել և կիրառվել են ադապտիվ նախագծումը, որի տեղային խնդիրներն է փորձում բացահայտել հայցորդը: Չնայած այն հանգամանքին, որ Երևանում ունենք բազմաթիվ հարմարեցված կառույցներ, որոնք ձեռք են բերել նոր գործառույթներ և կյանք, դրանց շուրջ հետազոտությունները սակավ են: Այս ատենախոսությունը նորույթ է մեր գիտական իրականության համար, մանավանդ որ ատենախոսը քննարկումներում կենտրոնանում է խորհրդային շրջանի արտադրական ու հասարակական շենքերի հարմարեցման խնդիրներին: Սերգեյ Պետրոսյանը, հիմնվելով այս ասպարեզում միջազգային փորձի վրա, համեմատականներ անցկացնելով Երևանում չօգտագործվող կառույցների հարմարեցման փորձի հետ, տալիս է ամբողջական պատկերը:

Ատենախոսությունը շարադրված է նմանատիպ աշխատանքներին

ներկայացվող պահանջներին համապատասխան՝ գիտահետազոտությանը հարիր տրամաբանական հաջորդականությամբ: Աշխատանքն ունի ներածություն, երեք գլուխներ, ընդհանուր եզրակացություններ, գրականության ցանկ և հավելված՝ գծագրեր, սխեմաներ, լուսանկարներ:

Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտության առարկան և սահմանները, մեթոդաբանությունը, նորույթն ու գործնական նշանակությունը:

*Ատենախոսության առաջին գլուխը* կենտրոնանում է հասարակական և արտադրական շենքերի հարմարվողական վերաօգտագործման միջազգային փորձի ուսումնասիրության վրա: Այն ներկայացնում է վերաօգտագործման էությունը, նպատակներն ու մեթոդները, պատմական զարգացումները, ինչպես նաև կիրառման տարբեր օրինակներ: Հարմարվողական վերաօգտագործումը դիտարկվում է որպես ճարտարապետական ժառանգության պահպանման, քաղաքային միջավայրերի վերականգնման և տնտեսական ու մշակութային արժեքների ստեղծման միջոց: Գլուխն ընդգրկում է նաև շենքերի հարմարեցման տարբեր տեսակների՝ կոնսերվացիայի, թանգարանացման, վերակառուցման, ռեզեներացիայի և հարմարեցման վերլուծություն՝ համաշխարհային հաջողված օրինակների համեմատությամբ: Եզրակացությունները ընդգծում են հարմարվողական վերաօգտագործման կարևորությունը՝ որպես կայուն զարգացման և պատմամշակութային արժեքների պահպանման արդյունավետ գործիք:

Երկրորդ գլուխը քննարկում է Երևանի հասարակական շենքերի հարմարվողական վերաօգտագործման միտումներն ու առանձնահատկությունները՝ Հայաստանի անկախության տարիներին: Գլուխն անդրադառնում է այն սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխություններին,

որոնք ազդել են հասարակական շենքերի գործառույթների և օգտագործման վրա՝ ընդգծելով սեփականաշնորհման, դիվանագիտական հարաբերությունների և մշակութային վերակողմնորոշման դերակատարությունը: Վերլուծվում են մի շարք կոնկրետ օրինակներ, այդ թվում՝

«Մասիս» ռեստորանի վերափոխումը Ֆրանսիայի դեսպանատան, Կոլխոզ շուկայի վերածումը առևտրի կենտրոնի և Ալեքսանդր հյուրանոցի վերափոխումը, որոնք ընդգծում են հարմարվողական վերաօգտագործման գործընթացների բազմազանությունը: Շեշտադրվում են տեխնիկական արդիականացումները, ինչպիսիք են էներգաարդյունավետ լուծումները, անվտանգային բարելավումները և կանաչապատման ծրագրերը: Գլուխը նաև ընդգծում է կայունության և պատմական ժառանգության պահպանման կարևորությունը, որը նպաստել է քաղաքային միջավայրի և մշակութային ինքնության պահպանմանը: Վերջապես, ներկայացվում են հարմարեցման սոցիալ տնտեսական ազդեցությունները, որոնք ներառում են մշակութային կյանքի աշխուժացումը, համայնքային ներգրավվածությունը և քաղաքի տնտեսական զարգացման խթանումը՝ պահպանելով Երևանի ճարտարապետական ժառանգությունն ու արդիական պահանջներին համապատասխանեցնելով այն:

Երբորդ գլխում քննարկվում է Երևանի արտադրական շենքերի ռեգեներացիայի միտումները՝ Հայաստանի անկախության տարիներին: Գլխում անդրադարձ է կատարվում խորհրդային ժամանակաշրջանից ժառանգած արտադրական շենքերի հարմարվողական վերաօգտագործման առանձնահատկություններին և այդ գամբնկյացի արվեստականությանը: Խորհրդային տարիներին արդյունաբերականացումը խիստ ընդգծված էր՝ Երևանում գործող բազմաթիվ գործարաններով, ինչպիսիք էին Երևանի կոնյակի գործարանը, «Նաիրիտը» և «Մարսը»: Սակայն անկախությունից հետո սոցիալ-

տնտեսական փոփոխությունների հետևանքով բազմաթիվ շենքեր կորցրին իրենց արտադրական գործառույթները՝ դառնալով լքված կամ անայիտան շահագործման համար:

Արտադրական շենքերի վերականգնումը դիտարկվում է որպես տնտեսական զարգացման, մշակութային ժառանգության պահպանման և բնապահպանական կայունության կարևոր միջոց: Տնտեսական տեսանկյունից հարմարվողական վերաօգտագործումը նպաստել է նոր բիզնեսների ներգրավմանը, համայնքների ակտիվացմանը և աշխատատեղերի ստեղծմանը: Մշակութային ժառանգության պահպանման առումով վերականգնման նախագծերը կարևոր են խորհրդային պատմաճարտարապետական արժեքների պահպանման և դրանց արդիականացման համար: Բնապահպանական ասպեկտով՝ շենքերի վերակառուցումը նվազեցնում է նոր շինարարության անհրաժեշտությունը, խթանում ռեսուրսների խնայողությանը և նպաստում է ներգաարդյունավետության բարձրացմանը:

Օրինակները, ինչպիսիք են «Թուֆենկյան» բուսիկ հյուրանոցի ստեղծումը, Երևանի կոնյակի գործարանի արդիականացումը և «Մեգերյան գորգի» թանգարանի վերափոխումը, ցույց են տալիս, որ արտադրական շենքերի ռեզեներացիան կարող է միավորել ժառանգության պահպանումը, ժամանակակից գործառույթները և տնտեսական կայունությունը: Չնայած գործընթացի բարդություններին՝ ներառյալ ֆինանսական սահմանափակումներն ու կարգավորող խոչընդոտները, վերականգնման նախագծերը մեծապես նպաստել են քաղաքային զարգացմանը՝ ապահովելով տնտեսության ակտիվացում և մշակութային արժեքների պահպանություն:

Պետք է ասել, որ աստենախոսությունն ունի մեծ ներուժ՝ ազդելու Երևան քաղաքում քաղաքաշինության ոլորտում փոփոխությունների վրա, սակայն դրա

համար հեղինակը պետք է կատարի որոշակի լրացումներ և հիմնավորումներ ներկայացնի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղինակը հարմարեցումը ներկայացնում է կառույցների և տեղանքի ռեգեներացիայի համատեքստում՝ ցանկալի կլիներ, որ ատենախոսությունը

ունենար ավելի շատ հիմնավորվածություն. մասնավորապես դրան կարող էին նպաստել տարբեր գիտական մեթոդների ներկայացումները՝ իրենց օրինակներով և որոշ թվական տվյալներ՝ ինչպիսին կարող էին լինել հարմարեցված շենքերի քանակը, դրանց ընդհանրական քարտեզ-տվյալների շտեմարան, կառույցների արժեքների համեմատական վերլուծություն և այլն:

Ընդհանուր եզրակացություններում ամփոփվել են հեղինակի դուրս բերված խնդիրները, սակայն պետք է նշել, որ դրանք կարելի էր ներկայացնել ավելի համակարգված ձևով՝ ատենախոսության արժեքը առավել ընգծված ցույց տալու համար:

Գրականության ցանկը թերևս փոքր չէ, սակայն այն կարող էր լինել ավելի ընդգրկուն և ցանկալի կլիներ, որ հեղինակը տեքստային մասում ունենար վերլուծական անդրադարձ ներկայացված հղումներին:

Կան որոշ տեխնիկական խնդիրներ, մասնավորապես գրականության ցանկի համարակալումը չի համապատասխանում տեսքում դրանց հղումներին, չնայած բոլորն էլ առկա են: Ցանկում կան կիսատ ներկայացված հղումներ:

Ուսումնասիրելով հեղինակի տպագրված թվով վեց հոդվածները, որոնք ներկայացված են հղումներում՝ պետք է նշեմ, որ դրանց բովանդակությունը նույնպես հարուստ է և լրացնում է ատենախոսությանը:


Ավարտելով՝ պետք է ասեմ, որ ներկայացված դիտողություններն ու նկատառումները չեն նսեմացնում ատենախոսության արժեքը և ուղղվող կարգի են: Միայն այն, որ Սերգեյ Պետրոսյանը հավաքել, վերլուծել և շրջանառության մեջ է դնում թեմայի հետ առնչվող հարուստ նյութ, ինքնին գնահատելի է:

Հաշվի առնելով աշխատության կարևորությունը, բարձրացրած հարցերի հրատապությունը՝ գտնում եմ, որ առենախոսությունը ավարտուն աշխատանք է, համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ժԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,


ճարտ. թեկնածու՝

21.11.2024թ.

 Է. Գ. Վարդանյան

Է. Գ. Վարդանյանի ստորագրությունը  
Հաստատում եմ՝ ՃՇՀԱՀ գիտական  
բարտուղար տ. գ. թ, դոցենտ



 Լ. Հ. Լևոնյան